Երևանի գինու օրեր փառատոնի գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Գովազդային վիճակախաղի կազմակերպիչն է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.2 Մասնակցելով գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է Կազմակերպչի պաշտոնական Ինստագրամ էջում՝ հրապարակման միջոցով:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.4 Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե մասնակիցը չի պատասխանում, հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

2.5 Մասնակցի մասնակցությունը կարող է չեղյալ համարվել նաև այն դեպքում, երբ Գովազդային վիճակախաղի ամփոփման ժամանակ՝ 2024 թ. հունիսի 6-ին կատարած չլինի Գովազդային վիճակախաղի 3.1 կետում նշված պայմաններից որևէ մեկը:

2.6 Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել միայն իրական անձնական էջերը՝ անուն, ազգանուն և լուսանկարով: Կեղծ տվյալներով էջերի մասնակցությունը կչեղարկվի:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Գովազդային վիճակախաղին մասնակցության հնարավորություն կտրվի 2024թ. մայիսի 29-ին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-ից սկսած մինչև 2024 թ. հունիսի 5-ը՝ Երևանի ժամանակով 23:59-ը ներառյալ հետևյալ պայմանները կատարած մասնակիցներին.

- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Տելեգրամի պաշտոնական ալիքին (այսուհետ՝ Տելեգրամ ալիք)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ինստագրամի պաշտոնական էջին (այսուհետ՝ Ինստագրամի էջ)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Հետևել Visa վճարային համակարգի Ինստագրամի պաշտոնական էջին (այսուհետ՝ Ինստագրամի էջ)
- Ինստագրամի էջում նշված հրապարակման մեկնաբանություններում նշել ինստագրամյան ընկերոջը և հավանել հրապարակումը:

3.2 Պատահականության սկզբունքով կընտրվի հինգ հաղթող մասնակից (այսուհետ՝ Հաղթող), որոնց կտրամադրվեն Երևանի գինու օրեր փառատոնի մասնակցության 2-ական փաթեթներ:

3.3 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի և մատուցված ծառայության համար:

3.5 Գովազդային վիճակախաղի հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով՝ ըստ Կազմակերպչի հայեցողության:

3.6 Գովազդային վիճակախաղի արդյունքների ամփոփումը տեղի կունենա 2024թ. հունիսի 6-ին՝ Տելեգրամ ալիքի Գովազդային վիճակախաղի մասին հրապարակման մեկնաբանության բաժնում՝ էկրանի տեսագրության միջոցով:

3.7 Գովազդային վիճակախաղի ընթացքում հաղթող 5 մասնակիցներից բացի կրկին պատահականության սկզբունքով կընտրվեն ևս 5 մասնակիցներ, հաղթող մասնակիցների՝ խաղարկության համար նախապես հայտարարված պայմաններին չբավարարելու դեպքում:

3.8 Վիճակախաղի ընթացքում յուրաքանչյուր մասնակից՝ անկախ իր մեկնաբանությունների քանակից, կարող է շահել միայն մեկ Պարգևատրում:

3.9 Պարգևատրումը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Կազմակերպչի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

3.10 Կազմակերպչի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Պայմանների 3.1 կետում նշված Վիճակախաղի հաղթող:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով: